

## ՄԱՐԻԱՄ ԽԱՆՁԱԿՅԱՆ

### ԻՍՈՒՎԱՅԻ ԱՐՔԱՆ ԵՎ ԹՈՒԴԻԱԼԻՅԱՍ IV-Ը (KBo XXXI 68)

Հոդվածի թեման Բ.ս. 13-րդ դարի խեթական դատական մի արձանագրություն է (KBo XXXI 68 = CTH 297.8), ուր քննարկված են այդքա Թուդիսալիյաս IV-ի դեմ կազմակերպված դավադրության մանրամասները: Այս աղբյուրն առաջին անգամ հրատարակվել և գիտական շրջանառության մեջ է դրվել Ռ.Ստեֆանինի<sup>1</sup> կողմից 1965 թվականին: Տարբեր տարիներին դրան անդրադարձել են Ն.Տանին և Թ.Վան դեն Հոուտը, հայ մասնագետներից՝ Վ.Խաչատրյանը: Նշենք սակայն, որ Ռ.Ստեֆանինի աշխատանքը որոշ անճշտություններ է պարունակում՝ կապված սեպագրագիտության մեջ ժամանակի ընթացքում ի հայտ եկած նորամուծությունների և վերափոխված ընթերցումների հետ: Հայագիտության համար այս արձանագրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ պարունակում է տեղեկություններ Հայկական լեռնաշխարհի ինագույն պետական կազմավորումներից մեկի՝ Խուվայի (Շոփքի) վերաբերյալ:

Ստորև ներկայացնում ենք արձանագրության գիտական տառադարձումն ու թարգմանությունը.

1. ...
2. [GIM-an-m]a-wa <sup>1</sup>He-es- ni-is<sup>2</sup> am-mu-uq-qa<sup>3</sup> I-NA [...]
3. [e]-er-u-en nu-wa-mu-kān<sup>D</sup> UTU-si 'A-NA <sup>1</sup>Ma-la- [...]
4. i-it-wa-ra-as ar-nu-ut nu-wa-ra-as ar-nu-nu-un nu-wa-ra-as I-NA [...]
5. pé-hu-te-nu-un<sup>4</sup> nu GIM-an I-NA <sup>URU</sup>Ta-hur-pa ar-hu-un
6. nu-mu <sup>GIS</sup>HUR ŠA <sup>GIS</sup>He-es-ni<sup>5</sup> ū-te-er<sup>6</sup> MA-HAR<sup>D</sup> UTU-si-wa lc-e<sup>7</sup>  
pa-a-[it-ti]
7. <sup>LU.MES</sup>GAL<sup>HI A</sup>-wa am-mu-uk kat-ta ū-wa-ti 'A-NA <sup>1</sup>Li-la-u-wa-an-ta-  
y[u]
8. <sup>GIS</sup>HUR ū-te-er nu-wa a-pe-e-da-ni-ya<sup>8</sup> QA-TAM-MA ha-at-ra-es
9. <sup>1</sup>Ta-at-ta-an-wa <sup>LU.MES</sup>GAL<sup>HI A</sup>-ya MA-HAR<sup>D</sup> UTU-si le-e pé-hu-te-si
10. ma-a-an-ma-wa-ra-as pé -hu-te-si-ma nu-wa i-da-la-u-wa-ah-ti

11. *UM-MA A-NA-KU-MA A-NA* <sup>1</sup>Li-la-u-wa-an-ta nu-wa *MA-HAR*  
<sup>D</sup>UTU-si
12. ku-wa-pí *Ú-UL* pa-a-i-mi <sup>1</sup>He-es-ni-is-<ni-is>-wa-mu<sup>3</sup> ku-it i-ya-zi
13. *Ú-UL* -wa-mu za-a-hi <sup>D</sup>UTU-si-ma-wa-mu-kán *Ú-UL* SAG.DU-an-  
pit<sup>10</sup> ku-iz-zi
14. ma-a-an-wa *Ú-UL* pa-a-i-mi nu-wa <sup>1</sup>Li-la-u-wa-an-da-as am-mu-uk
15. <sup>LU.MES</sup>GAL<sup>HI A</sup> -ya *I-NA* <sup>URU</sup>Ha-at-ti-na *MA-HAR* <sup>D</sup>UTU-si pa-a-u-e-en
16. nu-wa *A-NA* <sup>1</sup>He-eš-ni kat-ta-an pa-a-u-un nu-wa-mu-za-kán *A-NA*  
<sup>GIS</sup>GIGIR
17. kat-ta hal-za-a-is *UM-MA* <sup>1</sup>He-eš-ni-*MA* ki-nu-na-ya-wa-za *Ú-UL* ha-  
a-si
18. <sup>LU</sup><sup>MES</sup>GAL<sup>HI A</sup> -wa hu-u-ma-an-du-uš *I-NA* <sup>URU</sup>Ka-r[a-h]a-na li-in-[...]
19. [...l]-as-[w]a-kán *Ú-UL* ar-ha ki-it-ta-ri DUMU<sup>MES</sup> LUGA[L-m]a-  
wa-[kán]
20. [sa-ku-w]a-sar-ra-as ka-ru-ú am-me-da-az ne-an-[ta-at]
21. [ki-nu-na-ya-wa-za *Ú-U*]L ha-a-si nu-wa GIM-an ha-mi-is-ha-a[n-za  
ki-sa-ri]
22. [ERIN<sup>MES</sup> ANŠU.KUR.RA<sup>ME</sup>] <sup>3</sup>ni-ni-ik nu-wa-za an-da [...]
23. [u]k-wa-mi nu-wa-at-ta me-mi [...]
24. ...[k]u-i-e-es an-da nu-wa-a[t...]
25. [...]x-ta[...] ... -al-an EGIR-pa x[...]
26. [...]zi-[...]x nu-wa zi-iq-qa us-kán-[...] <sup>11</sup>
27. [zi-la]-tu-wa ku-in <u><sup>12</sup> e-ek-ta-an ha-ma-[an-du]<sup>13</sup>
28. ...Š[I-PU-PU <sup>1</sup>Ta-as-ku-i-le-es-sa kis-an me-mi-[ir?]]<sup>14</sup>
29. ...Š[I-PU-PU *A-NA* <sup>LU</sup>E.KAS<sub>4</sub> <sup>UT-TI</sup> <sup>15</sup>x-x[...]]<sup>16</sup>
30. [...]x<sup>LU.MES</sup>UKU.UŠ am-mu-uk nam-ma e-es-[zi]
31. [...]x-ki-nu-wa a-pé-el ANŠU.KUR.RA<sup>MES</sup> GIS.HUR/MA-HAR <sup>1</sup>He-  
eš-ni-[...]
32. *UM-MA* <sup>1</sup>He-eš-ni-i in-na-ra-wa-kán lu-u-ri-in [...]
33. ...
34. xxx <sup>D</sup>UTU-si-wa-kán *A-NA* <sup>GIS</sup>GIGIR za-am-[mu-ra-...]
35. zi-ik-ku-wa-za<sup>17</sup> *IS-TU* KARAS ANŠU.KUR.R[A.<sup>MES</sup>...]
36. GIM-an-wa <sup>GIS</sup>GIGIR.LUGAL a-pí-ya ar-nu-u[m-mi-...]
37. a-pí-ya *LÚ*-e-es-[d]u<sup>18</sup>
38. *UM-MA* <sup>1</sup>He-eš-ni-i *A-BU-BI-TI*-wa-za hal-zi-ih-hi nu-[...]x i-ya-mi
39. <sup>1</sup>Lu-pa-ak-ki-is-<sup>19</sup> ma<sup>19</sup>-wa-kán <sup>LU</sup>QAR-TAP-PU UGULA *LÚ* [<sup>MES</sup>...]  
ku-en-zi
40. <sup>1</sup>Hal-pa-*LÚ*-in-wa E-IN-NU-DA sa-an-na-pi-li-i[n...]-u-e-ni
41. LUGAL KUR <sup>URU</sup>I-sū-wa-ma-an-wa <sup>1</sup>A-la-li-mi-is<sup>18</sup> <sup>1</sup>Ta-aš-ku-i-li-is  
[<sup>1</sup>Hu-uz-zi]-ya-as-sa<sup>19</sup>

42. ma-an-wa-ra-an a-pu-us an-da e-ip-pir <sup>1</sup>Na-ni-zi-in-m[a...] pa-is-sa-an-la  
 43. GUD.MAH-an-ni<sup>20</sup> pi-ya-ir a-pa-a-at-wa a-pa-a-at u-ki-la [...m]i  
 44. zi-ik-ma-wa-kán in-na-ra-a lu-u-ri an-da ti-ya-si <sup>D</sup>UTU-si-wa-[z]a-kán  
 45. a-pe-c-da-ni-pat A-NA GAL.KÙ.BABBAR se-er u-wa-it-ta-ri<sup>21</sup>  
 46. [ma-a]-an *UL* nu-wa-mu an-da u-e-ri-ya-hu-ut  
 47. <sup>1</sup>Hc-cs-ni-i-in-wa ku-wa-pí <sup>URU</sup>KU.BABBAR-si IGI-zi BAL-si INIM-ni e-cp-tc[n]  
 48. nu-wa-as-si /-NA ZA-RA-TI<sup>22</sup> pa-a-un nu-wa-za ar-rc-es k[i]-iz-[zi]  
 49. nu-wa-kán an-da hal-z[i]-i-e-er nu-wa-kán <sup>GIS</sup>a-xx[...]<sup>23</sup>  
 50. an-da ar-ha-ha-r[i]

Թարգմանությունը.

1. ...
2. [ Հենց որ] Խեսնին<sup>24</sup> ինձ դեպի [...<sup>25</sup>]
3. հասանք, և ինձ, Մալա[ցիտիիս] Արևն [ասաց],
4. «զնա՛, բեյ», և նրանց բերեցինք, և նրանց դեպի (Խաթենա՛)
5. հասցրեցինք; և երբ որ Տախուրպա<sup>26</sup> հասա,
6. և ինձ բերեցին Խեսնիի կրամանը . «Արևի առջև չգնա՛ն [...],
7. և իշխանները ինձ ցած բերեցին, Լիլաուվանդային
8. հրամանը բերեցին, և նրան էլ նույն ձևով փոխանցեցիր/գրեցիր,
9. «Տատտային և իշխաններին Արևի առջև չտանես,
10. ապա քե տանես, չարագործություն արած կլինես»,
11. այսպես եմ ասում ես Լիլաուվանդային. «Էլ Արևի առջև
12. երբեք չեմ գնա, Խեսնին ինձ կանի:
13. Արևը թող իմ գլուխը չկտրի
14. [...] չեմ գնա: Եվ Լիլաուվանդասն ու ես,
15. և իշխանները Խաթենա քաղաք Արևի մոտ գնացինք,
16. և ես ցած իջա Խեսնիի մոտ, և կառքի վրայից
17. նա ինձ ձայն տվեց: Այսպես (ասաց) Խեսնին. «Այժմ [...]
18. Բոլոր իշխանները Կարախանայում<sup>27</sup> երդվեցին
19. Ոչ ոք նրանցից չմնաց, իսկ արքայագնը
20. իմ (հանդեպ) ուղիւ մն[աց]
21. և այժմ մի վատահիդ: Եվ հենց որ գալիս եմ [ը գա]
22. գորքերն ու կառքերը պատրաստիլ, և
23. և քեզ կասեմ: [...]
24. ... ովքեր ներսում ե քեզ]
25. ... ետևում...
26. ... և դու հետևիլ՝...
27. Հետո<sup>28</sup> ցանցով [թալ] կապեն
28. ...Տասկուիլին այսպես է ասում,

29. ...սուրհանդակի պաշտոնին/տեղին...
30. ...ծանր հետևակայինները ինձ կլիկն դառն[ում են]
31. .. (և) մյուս զորքերը խենճիկ մոտ...
32. ..Այսպես (ասաց) խենճին «Ուղղակի վիրավորանք...
33. ...
34. ...Արևը կառքի վրա կվիթա[վորվի]
35. և դու բանակի բազմության միջե
36. երբ արքայի կառքը այդ ժամանակ<sup>29</sup> հեռաց[նեն]
37. այդ ժամանակ ....
38. Այսպես (ասաց) խենճին. «Տանուտիրոջը ես կկանչեմ և [...] կանեմ
39. Իսկ Լուսակկին, Կառապանը հազարապետին կսպանի<sup>30</sup>
40. Խալպացիտիին դատարկ ամբարում [...]
41. Նրե Իսուվայի արքային Ալային<sup>31</sup>, Տասկուլին<sup>32</sup> և [խուցցի]յան<sup>33</sup>
42. Նթե նրանք նրան (=Իսուվայի արքային) կրոնեն, Նսունցին ինձ[...]
43. անասնագու՞թող նրան ուղարկեն, նրան ես ինքս [...]
44. Բայց դու ինձ ուղղակի վիրավորում ես միացար', բայց Արևը
45. կանհանգստանա այդ արծաթե գավաթի համար,
46. ապա թե ոչ, նրանք ինձ [...]»
47. մինչդեռ Խաթթուուսսում խենճիին [...]
48. նրա մոտ, դեպի վրանը գնացի, և նա լվացվում էր,
49. և ներսում կանչեց, և [...]
50. Երբսում [...]

Ամենայն հավանականությամբ արքայազն խենճիի այս դավադրությունը պետք է որ տեղի ունեցած լիներ Թուրխալիյասի գահակալության առաջին շրջանում, երբ նրա իշխանությունը դեռևս կայուն չէր<sup>4</sup>: Դավադրության պատճառների և մասնակիցների ինքնության առավել մանրամասն քննարկումը թողնելով մեկ այլ, առավել համապարփակ ուսումնասիրման, փորձենք վերլուծել Իսուվային առնչվող հատվածները:

Ըստ էության, Իսուվային վերաբերում է տեքստի երկու տողը միայն ("41-42), ուր Իսուվայի արքան հիշատակվում է դավադիրների շարքում: Սակայն այս աղբյուրի համադրությունն այլ աղբյուրների հետ և տվյալ շրջանի քաղաքական անցքերի վերլուծությունն ի հայտ են բերում բավականին սերտ խեթա-իսուվական առնչություններ: Նշենք, որ Իսուվան խեթական տերության առաջխաղացման պահից ի վեր մշտապես եղել է խեթական արտաքին քաղաքական հարաբերությունների առանցքային կետերից մեկը: Սկզբնապես թշնամական երկրների շարքում գտնվելով, 13-րդ դարում արդեն խեթական տերության վստահելի դաշնակիցների շարքում էր, և դեռ ավելին, Իսուվայի արքայական տան ներկայացուցիչները կարևոր պաշտոններ էին զբաղում խեթական արքունիքում, իսկ Խաթթիի պաշտամունքային կյանքում Իսուվայի արքաները առանձնա-

հատուկ դեր ունեին համախեթական աստվածություններին տրփող երկրպագության կազմակերպման գործում<sup>35</sup>:

Իսուվայի արքայի անունը տեքստը չի պահպանել, սակայն դեռևս Հ.Քլեմգելը, հենվելով այլ աղբյուրների վերլուծության վրա, եզրակացրել է, որ ամենայն հավանականությամբ խոսքը Արիշարաթումայի մասին է, որն ամուսնացած էր Խաթոսիլիս III-ի դստեր՝ Քիլուշխեպայի<sup>36</sup> հետ, և ամենայն հավանականությամբ Իսուվայի հետագա արքա Էիլիշարաթումայի հայրն էր<sup>37</sup>: Արձանագրությունը հիշատակում է նաև Լուպակկին: Կարծիք է հայտնվել, որ սա նույն Լուպակկին է, որին Իսուվայի արքան՝ Արիշարաթուման իր նամակում (KBo XVIII 4) դիմում է որպես իր «սիրելի հոր»<sup>38</sup> և որը միաժամանակ «թագուհու (Պուդուխեպայի)» ծառան էր»<sup>39</sup>:

Ինչևէ, հաշվի առնելով այն փաստը, որ դավադրության մեջ ներգրավված անձինք թե արքայական ընտանիքի, թե վասալ երկրների դինաստիաների հետ բարդ և տարաբնույթ կապերի մեջ էին, առավել ևս որ Լուպակկին և Արիշարաթուման միաժամանակ անուղղակիորեն պատկանում էին կառավարող արքայի արքայատոհմին, կարող ենք ենթադրել, որ Արիշարաթուման գահընկեց է արվել, և Իսուվայի գահը փոխանցվել է նույն արքայատոհմի ներկայացուցիչ և խեթական արքունիքի հետ ուղղակի արյունակցական կապ ունեցող Էիլիշարաթումային: Նշենք, որ խեթական արքունիքը միշտ էլ կիրառել է տարբեր պետությունների և իշխանությունների հետ խնամխական կապերի հաստատման պրակտիկան որպես արտաքին քաղաքական շահերի առաջխաղացման հարմար միջոց: Կախյալ արքաների պարագայում դա նաև ապահովում էր տվյալ պետության արտաքին կողմնորոշման խեթամետ ուղղվածությունը. ամուսնական. պայմանագրերը սովորաբար ենթադրում էին նրանց պարտավորվածությունը հետագայում գահը փոխանցել խեթական արքայադստեր ժառանգին<sup>40</sup>, ինչն էլ բնականաբար ավելի էր նպաստում տվյալ երկրում խեթական ազդեցության ուժեղացմանը: Տվյալ օրինակը միանգամայն համապատասխանում է այս պատմական անցքերին. բացի Իսուվայի արքայի հետ ամուսնացած Քիլուշխեպայից, արքայազն Ներիկկալին ամուսնացած էր Ամուրրուի, իսկ Խաթոսիլիսի մյուս որդին՝ Բաբելունի արքայադստեր հետ, երկու արքայադուստր ուղարկված էին Ռամգես II-ի կանանոցը և այլն<sup>41</sup>: Նման պայմաններում Էիլիշարաթուման, լինելով ուղղակիորեն Խաթոսիլիս III-ի թոռը և Թուդխալիասի հարազատ քրոջ որդին, միգուցե ավելի լայլ կլինեք խեթական արքունիքի. կամ ավելի ճիշտ գահակալող արքայի նկատմամբ, քան իր հայրը՝ Արիշարաթուման:

Իսուվայի արքաներից մինչ այժմ մեզ հայտնի են միայն Արիշարաթումայի և Էիլիշարաթումայի<sup>42</sup> անունները: Երկու անուններն էլ դիցանվանակերտ են՝ իրենց կազմի մեջ պարունակելով šarruma խորրիական բառը: Այն šarruma աստծո անունն է, որը խորրիական դիցաբանությունում

հանդես է գալիս որպես Թեշուբի և Հեբաթի ուրլի, թարգմանաբար՝ «Թեշուբ աստծու ցլիկ/ուրլի»<sup>43</sup>։ Այս, ինչպես նաև Խաութթիլի կրոնական կյանքում խուորիական աստվածների պաշտամունքում Խաութիայի արքաների ունեցած զգալի դերը<sup>44</sup>, ինչպես նաև այն փաստը, որ մինչև խեթական արտաքին քաղաքական սյուրտում ներգրավված լինելը, Խաութան այսպես թե այնպես գտնվում էր հարևան Խուրլի-Միտաննի պետության անմիջական ազդեցության տակ<sup>45</sup> թույլ են տալիս միանշանակորեն պնդել այս արքայական դինաստիայի խուրիական արմատների մասին, մասնավաճառ որ համաժամանակյա խեթական արքայատոհմը մուլիմ-պես խուրիական էթնիկ տարրի առկայության ապացույց կարելի է համարել<sup>46</sup>։ Ընկալաբար, հնարավոր չէ ճշգրիտ դատողություններ անել ոչ այս, և ոչ էլ մնացած էթնիկ խմբերի տարածվածության կամ զբնակայության մասին, առավել ևս, որ գտնվելով քաղաքակրթությունների և սոստրական ճանապարհների խաչմերուկում, Խաութան չէր կարող բնակեցված լինել մեկ էթնիկ խմբի ներկայացուցիչներով։

MARIAM KHANZADYAN

## THE KING OF İŞUWA AND TUDHALIYAS IV

The article deals with the Hittite cuneiform text belonging to the 13-th century B.C., which contain information regarding İsuwa, one of the ancient states on the Armenian Highland. Specifically, it tells about the role of the kings of İsuwa in the inner life of the Hittite empire in the 13-th century B.C.

### ՃԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. R.Stefanini, La congiura di Hesni, "Athenaeum", 40, 1965
2. Տեքստի գիտական տառադարձման մեջ կիրառված են նորագույն սկզբունքները (Chr.Ruster – E.Neu, Hethitisches Zeichenlexikon, Wiesbaden, 1989)։ Նոր տառադարձման համաձայն՝ He-es-ni-is
3. Ստեֆանինին այս արտահայտությունը թարգմանել է որպես "Խեսնին և ես... զմացինք"՝ Սակայն բնագրի am-mu-uq-qa ձևը uk/am-mu-uk անձնական դերանվան հայցական հոլովն է, և չի կարող թարգմանվել որպես "ես"։ Ենթադրվելիք [GIM-an-m]a-wa արտահայտությունը պարունակում է wa-ենկլիտիկը՝ ուղիղ խոսքի ցուցիչը։ Կարող ենք միայն ենթադրել, որ Սալացիտին Խեսնիի հրամանով ուղևորվել է ինչ-որ մի քաղաք, հավանաբար՝ Խաթենա, ինչի մասին էլ նա պատմում է։ Վերականգնվելիք տեքստը կարող էր ունենալ հետևյալ տեսքը. GIM-an-ma-wa 'He-es-ni am-mu-uq-qa I-NA [<sup>URU</sup>Ha-at-ti-na .... nu-war- ] eruen" ["Երբ] Խեսնին ինձ [Խաթենա ուղարկեց], և երբ որ մենք հասանք...։

4. Այստեղ և այնուհետ *pf-hu-te* տառադարձումն ըստ նոր ընթերցման փոխարինված է *pe-hu-te* տառադարձումամբ:
5. Բնագրի <sup>12</sup> «*դետերմինատիվը վրիպակ է, պետք է լինի անձնանունների*»<sup>13</sup> դետերմինատիվը:
6. Նոր տառադարձման համաձայն՝ *u-te-er*:
7. Նոր տառադարձման համաձայն՝ *le-e*:
8. Նոր տառադարձման համաձայն՝ *a-pe-e-da-ni-ya*:
9. *He-es-ni-is>-ni-is<-wa-mu-kán* անվան *>-ni-is<* վանկերի առկայությունը գրչի սխալն է, նախորդ երկու վանկի կրկնորոգություն:
10. Ստեֆանինիի մոտ՝ *pi*:
11. Իմաստին համապատասխան պետք է լինի *usk-* րայի *usk/uski*՝ “հետևիր, հետամուտ եղիր” ձևը:
12. Ալեհայտորեն *u-*ն ավելորդ նշան է, պետք է լինի *ku-in e-ek-ta-an*:
13. Հնարավոր է *e-ek-ta-an ha-ma-an-du*՝ “թող կապեն ցանցով” տարբերակը:
14. Զերականական ճիշտ ձևը պետք է լինի *me-ma-i* կամ *mc-ma-as*՝ “ասում է” կամ “ասաց”:
15. Առավել հայտնի է <sup>14</sup> *KA<sup>3</sup>.E*՝ “սուրհանդակ” տարբերակը:
16. Ստեֆանինիի մոտ կա նաև *ME-K[A??..* շարունակությունը:
17. Ստեֆանինիի մոտ՝ *zi-ik-ma-wa-za*:
18. Վ.Խաչատրյանը սխալմամբ *A-la-li-mi* անձնանունը վերագրել է Իսուվայի արքային: В.Хачатрян, стр. 51:
19. Եմրադրվում է, որ այս լսկումայում խոսքը Խուցիյայի մասին է, տես N.Tani, “More about “Hesni Conspiracy”” *Altorientalische Forschungen* 28, 2001, 1, p.158:
20. Ուղիղ ձևը՝ *GUD/GU<sub>4</sub>.MAH-atar*՝ “անասնագոմ, փարախ”:
21. *uwaya-* “անհանգստանալ” բայի միջին կրավորական ձև:
22. Աքքադերեն տարբերակը՝ *zarātu*:
23. Հնարավոր է, խոսքը <sup>15</sup> *ariyal(a)-ji*՝ “զամբյուղի” մասին է:
24. Արքայազն Խեսնին Թուղխալիյաս IV-ի հարազատ եղբայրն էր:
25. Խոսքն, հավանաբար, Խաթենա քաղաքի կամ երկրի մասին է. որն ամենայն հավանականությամբ գտնվում էր Եփրատի ավազանում՝ ժամանակակից Արմուդյան բնակավայրից մինչև Երզնկայի հովիտ ընկած տարածքում (В.Хачатрян, стр.51): Խաթենա քաղաքի տեղադրության մասին առկա կարծիքները տես J.F.del Monte und J.Tischler, *Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte*, Wiesbaden, 1978, s.61:
26. Տախտուրպա քաղաքի տեղադրության մասին առկա կարծիքները տես J.F.del Monte und J.Tischler, նշվ. աշխ.:
27. Վ.Խաչատրյանն իր “Восточные провинции Хеттской империи” աշխատության մեջ առաջարկում է *Ka-ma-ha-na* ընթերցումը, եպրակացնելով, որ խոսքը Կամախանայի, կամ Կոմախայի մասին տեղադրելով այն Խաթենա երկրում, Իսուվայի անմիջական հարևանությամբ և նույնացնելով այն հետագայիս Կամախի/ Կոմագենեի հետ: Սակայն առավել վկայված է *Ka-ra-ha-na* ընթերցումը: Նույն մոտեցումն ունի Ռ.Ստեֆանինին: Տես նաև Ա.Քոսյան, “Անի-Կամախը խեթական դարաշրջանում”, Պատմա-Բանասիրական Հանդես, 2002, 3:

28. Հնարավոր է նաև “ապագայում” թարգմանությունը:
29. Հնարավոր է նաև “այնտեղ” թարգմանությունը:
30. Սեկ այլ կարծիքի համաձայն, UGULA LU<sup>MIS</sup> · “հազարապետ” քառը նույնպես վերաթերում է Լուպակկին (N.Tani, p.158):
31. Խեթական արքունիքում հավանաբար զբաղեցնում էր GAL UGULA LIM<sup>MES</sup> հազարապետի պաշտոնը:
32. Ն.Տանին ենթադրում է, որ Տասկուլիին նույնպես դավադիրների շարքում էր, քայց արսաբնապես արքայի կողմնակից էր, ավելին, աջակցում էր Խեսնիին, որին էլ վերջինս հնարավոր է, որ խոստացել էր ծանոթ հետևակայինների հրամանատարի պաշտոնը՝ GAL.UKU.UŠ; հնարավոր է, որ Տասկուլիի այս քայլը թելադրված էր Իսուվայի արքայի ձեռքակալության դեպքում ճշմարտության քացահայտման վտանգով (N.Tani, p.159):
33. Հնարավոր է, որ խոսքը գնում է արքայազն (DUMU.LUGAL) Խուցցիայի մասին, որը միաժամանակ արքայազորի պետն էր՝ GAL MEŠEDI
34. N.Tani, p.155; T.Bryce, The Kingdom of the Hittites, p.326-336
35. H.Klengel, Die Hethiter und Išwa, Oriens Antiquus, 7, 1968, s.74-76
36. Քիլուշխեպան ամենամյան ահավանականությամբ Խաթուաիլի III-ի կնոջ՝ Պուդուխեպայի դուստրն էր, այլ ոչ թե քույրը: Հօգուտ այս ենթադրության է արտահայտվել Թվան դեն Հոուտը, փաստարկելով. որ Էխիշարումայի և Թուլխաիլաս IV-ի միջև առնվազն մեկ սերնդի տարբերություն կա, և ավելի ճիշտ կլինի Քիլուշխեպային դիտել որպես Պուդուխեպայի դուստր, այլ ոչ թե քույր: (Th.van den Hou, Der Ulmitešub-Vertrag Eine prosopographische Untersuchung, Wiesbaden, 1995, p.126)
37. H.,Klengel, s.71
38. N.Tani, p.158
39. J.de Roos, Who was Kilušhepa?, Jaarbericht van het Voorazialisch-Egyptisch Geselschap, “Ex Oriente Lux”, 29, p.75
40. T.Bryce, p.51
41. T.Bryce, p.294
42. Arisarruma անվան մեջ առանձնացվում է միայն šarruma քառը, իսկ Ehlīšarruma-ն կազմված է eh(e)li՝ փրկել; փրկություն, ազատագրում, և šarruma քառերից (E.Laroche, Glossaire de la langue hittite, Revue hittite et asianique, tome XXXIV, 1976, p.75)
43. М.Л.Хачикян, Хебат, МНМ, том II, М, 1992 стр. 586; E.Laroche, tome XXXV, 1977, p.218
44. H.Klengel, p.74-76
45. Г.М. Аветисян, Государство Митанни, стр.42-43
46. H.Klengel, p.71

#### ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

CTH – E.Laroche, *Catalogue des textes hittites*, Paris, 1971  
 KBo – Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig and Berlin  
 МНМ – Мифы Народов Мира, М, 1992